



Մամուլի հաղորդագրություն

ք.Երևան, 05 մայիսի, 2010թ.

Երևանում կկայանա CTS2010 միջազգային ամենամյա զբոսաշրջային ցուցահանդեսը

CTS2010 ամենամյա 10-րդ Միջազգային Ջրոսաշրջային Ցուցահանդեսը տեղի կունենա 2010 թվականի մայիսի 14-15-ը «Մոսկվա» կինոթատրոնում ժամը 11:00-19:00:

CTS2010-ը նշանակալի միջոցառում է, որը կազմակերպվում է ճամփորդական Գործակալների Հայկական Միության (AATA) և ճամփորդական Գործակալների Ամերիկյան Միության (ASTA) հայաստանյան ներկայացուցչության կողմից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության հովանու ներքո:

Ցուցահանդեսը կազմակերպվում է ԱՄՆ ՄՁԳ «Մրցունակ մասնավոր հատված Հայաստանում» (CAPS) ծրագրի համագործակցությամբ և աջակցությամբ:

CTS2010 զբոսաշրջության ցուցահանդեսն ուղղված է տարածաշրջանային զբոսաշրջության զարգացմանը և ցուցահանդեսին մասնակցում են մեծ թվով ընկերություններ թուրքիայից՝ մասնավորապես Վան նահանգից, Վրաստանից, ինչպես նաև Թուրքիայից:

CTS2010 ցուցահանդեսի շրջանակներում մայիսի 14-ին կազմակերպվելու են նաև կլոր սեղան-քննարկում և դեմ-առ-դեմ հանդիպումներ տարածաշրջանային զբոսաշրջության թեմայով, որին հնարավորություն կունենան մասնակցելու մեծ թվով Հայաստանյան զբոսաշրջային ընկերություններ և կիսանդիպեն թուրքիայից ու Վրաստանից ժամանած գործընկերներին:

Ցուցահանդեսի գլխավոր հովանավորներն են՝ «Չեխական ավիաուղիները», Հայաստանի Հյուրանոցների Միությունը, Հայ-Գերմանական համագործակցության GTZ ծրագիրը և «Ֆայվ Սթարզ Թրավել» գործակալությունը, հովանավորներն են՝ «Գոլդեն Թյուրքի Երևան», «Արմենիա Մարրիոթթ» և «Անի Պլազա» հյուրանոցները, «Չարենցի 28» ռեստորանը, «Էլիտ Բաս» ընկերությունը: Ինֆորմացիոն հովանավորներ՝ «Արձագանք» ռադիոկայան, «Նեքստ Վոյաժ» ամսագիր, «Սփյուռ» տեղեկատվական ծառայություն և «Տուրինֆո» ամսագիր:

Ցուցահանդեսը հետապնդում է հետևյալ կարևորագույն նպատակները՝

1. խթանել ներգնա և տարածաշրջանային զբոսաշրջությունը՝ ցուցահանդեսի շրջանակներում օտարերկրյա տուր-օպերատորների համար ճանաչողական շրջայց կազմակերպելու միջոցով (Վրաստան, Թուրքիա);
2. զարգացնել և ամրապնդել հարաբերությունները Հայաստանի, Թուրքիայի և Վրաստանի զբոսաշրջության ոլորտի ընկերությունների և հասարակական կազմակերպությունների միջև, ստեղծելով բարենպաստ պայմաններ տարածաշրջանային զբոսաշրջային փաթեթների համատեղ մշակման, զովագրման և վաճառքի համար;
3. խթանել ներքին (մարզային) զբոսաշրջությունը;
4. տեղեկացնել հասարակությանը, պոտենցիալ հաճախորդներին, մասնագետներին, պաշտոնյաներին և մյուս շահագրգիռ կողմերին զբոսաշրջության ոլորտի զարգացման միտումների մասին և ստեղծել ֆորում զբոսաշրջության ոլորտի բոլոր շահագրգիռ կողմերի համար;
5. Հայաստանի բնակչությանը ընձեռնել հնարավորություն արձակուրդները մատչելի և որակյալ պլանավորելու համար:

Այսպիսով, CTS2010 ցուցահանդեսի շրջանակներում հնարավորություն կլինի տեղեկանալու զբոսաշրջության զարգացման տարածաշրջանային միտումներին և խնդիրներին, ինչպես նաև ծանոթանալու այս ոլորտում Հայաստան-Թուրքիա գործարար փոխհարաբերությունների զարգացմանը և հեռանկարներին:

Մասնակիցներին կընձեռնվի պոտենցիալ հաճախորդներին իրենց ապրանքներն ու ծառայությունները ցուցադրելու և վաճառելու հնարավորություն:

Այցելուները կունենան ներքին և արտագնա զբոսաշրջության հնարավորություններին ծանոթանալու և Հայաստանում ու արտերկրում իրենց արձակուրդները պլանավորելու եզակի հնարավորություն:

CTS 2010 կազմ. կոմիտե:

Միջոցառման ղեկավար՝ Եղիշե Թանաշյան (Բջջ. 091-416695)

Հեռ. 37410 533231/532366 / Ֆաքս: 37410 532291 / Էլ.փոստ: info.cts.am / Վեբ կայք: www.cts.am

